ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒՆՈՒԱՐ 15, 1895. ԹԻՒ 1 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 88

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՒՐՈԱՊ ԵՒ ԹՈՒՐՔՆ
(Լոնտոնի անգլ. ՓԸՆՉԷՆ արտատպեալ)

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" են

ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպա և Թուրքը (պատկեր).— Եւրոպա և Հայկական խնդիրը.— Ներկայ կացութիւնը —Սուր առնլու ժա՞մ է. — Նամակ Կ. Պոլսէ.— Նամակ ի Պուլկարիոյ.— Թրքաց գաղտնիքը.— Կլատստոն և Հայաստան.— Ահագին Մասսա-միթինկ և Մեծ Զայրացման արտայայտութիւն — Հայրենասիրութիւնը ճշմարտութեամբ.— Պաշտամունք Հոգեհանգստեան վասն Սասնոյ Հայ Նահատակաց.—Նիւ Եորքի Հայոց մէջ Միութեան խնդիր.— Շաբաթաթե՞րթ, կիսամսեա՞յ թէ ամսօրեայ պիտի լինի Հայք.— Այլ և Այլք.

ԵՒՐՈՊԱ
ԵՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

Ա

Երկու ամիս է որ քաղաքակիրթ ազգերն Հայաստանի վերայ կը խօսին։ Լրագրական սահմանէն դուրս զեղումներ եղան և մաս-միթինկներու մէջ ժողովուրդք արտայայտեցին իրենց համակրանք դէպ ի Հայ Ազգն։ Ի տես այս հանրային յուզմանց Հայ հայրենասէրն սակաւ մի կը մխիթարուի, և սակայն չի կրնար միանգամայն չտխրիլ տեսնելով որ կան Եւրոպացիներ կեղծաւոր և արծաթապաշտ որք Անասելի Անասնոյն թեր կ'ելնեն և վիրաւոր Հայաստանի հառաչանքն խեղդել կ'աշխատին։ Աւելի ցաւալի է մեծ Տէրութեանց ցուրտ վարմունքն նահատակ Հայաստանեայց վերաբերութեամբ։ Այնպիսի ահաւոր կատարածի մի համար, որոյ առթիւ բանակ և նաւատորմ յղել կ'արժէր, հազիւ թէ դիւանագիտական ներկայացումներ անել յօժարեցան։ Կ'արժէր դեսպանախորհուրդ գումարել, և սակայն հազիւ հիւպատոսաց ոմանց քարտուղարներն կ'ուղարկուին քննութեան ներկայ գտնուելու։ Ամեն երկրի լրագրաց մէջ գտնուեցան ոմանք որ հանրային զայրացման բոցերուն վերայ պաղ ջուր թափել փութացին։ Ռուսիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսա, Աւստրիա կա՛մ ձեռնպահ մնացին և կա՛մ բաղդատաբար թոյլ շարժեցան։ Ս. Պաւղն իսկ, որուն յատուկ դիմում անելու խօսք կը լինէր, անտարբեր մնաց, և որ աւելի տխրալին է, Հռովմէական Հայոց Պատրիարք Ազարեան, անշուշտ Հռովմէական կեդրոնին խորին քաղաքականութեան համակերպութեամբ, յաւէտ օսմ. կառավարութեան ջատագով հանդիսացաւ՝ պաշտօնապէս ժխտելով կատարածի արհաւիրքն։

Բ

Անգլիական կառավարութեան վարմունքն մասնաւոր ուշադրութեան արժանի է։ Վայրագ Թրքին անգութ պաշտպանն է ինքնասէր Անգլիա, և իւր բոլոր ջանքըն եղած է, վերջին տարիներս, Հայոց գանգատներն անլսելի թողուլ, չիցէ՛ թէ Արեւելեան խնդիրն նորէն յուզուի, և իւր անհաւատարմութիւնն դէպ ի Դրան քրիստոնեայ հպատակներն խայտառակուի առաջի աշխարհի, և Եւրոպեան կարծիքըն հաւանի ռուսական յառաջխաղացութեան դէպ ի Հայաստան։ Այդ պատճառաւ Թուրքիոյ վերաբերութեամբ Պլիւ Պուքերն չեն հրատարակուած։ Այդ երկիւղով է որ Թայմզ, կատարածի առաջին տեղեկագրութեան պահուն, հաւատ ընծայել չուզեց։ Զափազանցութիւն չի լինիր կարծել թէ Անգլիական կառավարութիւն անտարբերութեամբ պիտի դիտէր Հայաստանի քրիստոնեայ ժողովրդի ջնջումն, սպառումն, պայմանաւ որ Ռուսիա առիթ չունենայր նոր աշխարհակալութեան մ'ի Թուրքիա։ Եւ շատ ցաւեցաւ իւր սրտին երբ տեսաւ թէ Թուրքն անխոհեմութեամբ դղրդեցուցիչ հարուած տալով Սասնոյ դաւառին՝ զարթուցեր է Եւրոպեան ժողովրդոց ուշադրութիւնն։ Անգլիոյ ջանքն պիտի լինի այժմ, եթէ

կարելի է, այս աղմուկներուն վերջ տալ կամաց կամաց, և թող տալ Թրքին պահպանել իւր պետութիւնն անվթար։ Եթէ այդ չլինի կարելի, Հայաստանի վերայ կարգել տալ մի ընդհանուր կառավարիչ։

Կլատսթօն դիտելով կառավարութեան վարանոտ ընթացքն, ձայն բարձրացոյց Լոնտոնի և Բարիզու Հայոց պատուիրակութեան պատասխանելու առթիւ։ Արդարեւ Անգ. կառավարութիւնն աւելի վատութիւն յանձն պիտի առնոյր յօգուտ Թրքաց եթէ չպատկառէր Վեհ Ծերունիէն, որ ի մեր մխիթարութիւն դեռ կենդանի է և չպիտի խնայէ իւր սապալիչ հարուածն նոյն իսկ իւր ազատական կուսակիցներուն՝ եթէ վատութեամբ վարուին այս խնդրոյ մէջ.— ա՛յնքան մեծ է Կլատսթօն։ Կեցցէ՛ Կլատսթօն։

Գ

Տէրութեանց դաղջ վարմունքն ժողովրդոց ալ հաղորդելու գործիներ, շահամոլ և անխիղճ մարդիկ չեն պակսիր։ Ուռուսս Փաշա մինակ չէ այժմ։ Սպանիացի ուղեւոր Քոխմինէզ, որ Թուրք կառավարութեան ծառայութեան մէջ էր իբրև աշխարհագիր, և Մարտէն ցնոյեմբեր ի Հայաստան կը գտնուէր, այժմ Լոնտոն վերադարձած՝ կը ժխտէ Սասնոյ կոտորածն։ Նա կը պնդէ թէ բոլորովին սուտ է թէ Թուրք զօրքերն կանանց և տղոց վերայ խժդժութիւն գործեր են։ Լոնտոնի «Փոսթ» Լրագիրն քսու Քոխմէզի բերան եղեր է, ինչպէս որ Նիւ Եորքի «Հէրալտն» արդէն Թրքաշունչ ժխտմանց անդրանիկ գործին եղած է։

Թուրք կառավարութիւնն բաւական Եւրոպացիներու պաշտօն, թոշակ և չքանշան տալու կարող է։ Սուլթանն անձնական անհուն հարստութեան տէր է, Ուրեմն զարմանք չէ բնաւ եթէ Թրքին դատըն ջատագովող պէսպէս փաստաբաններ կը գտնուին։ Սակայն այս շատ ցաւալի է մեզ։ Թերթերու մէջ հրատարակուող այս ոչ պաշտօնական ուրացումներ յաջորդելով պաշտօնականներուն, նախ տարակուսանքի մէջ կը ձգեն ժողովուրդներն և ապա սակաւ կը ցրտացունեն նոցա համակրանքն դէպ ի մեզ։ Հասարակ ժողովուրդն դիւրախաբ է ընդհանրապէս և այդպիսի հրատարակութեանց վերայ քննադատի աչօք չի նայիր։

Դ

Նկատելով այս ամենն, և այն իրողութիւնն ալ թէ մեծ Տէրութեանց ոչ մին մասնաւորապէս թիկունք է մեզ, պէտք է խոհեմ երկիւղիւ և դաղով ոտքի ելնեմք ներկայ պատեհութենէն օգտուելու։ Հայաստան կարողութիւն չունի Սասնոյ նըման ուրիշ զոհեր տալու։ Վերջին հարուածն աղետաբեր եղաւ, գրեթէ մահացու, Հայաստանի բազմահայ և զօրաւոր կեդրոններէն միոյն։ Արդէն Թուրքիոյ ամեն կողմն Հայոց վիճակն զարհուրելի է։ Անգործ, անչահ, աղքատութենէ բըռնուած, երկիւղով տանջուած, անստոյգ և անապահով դրութեան մէջ կը սպասեն տրագահաս փրկութեան մի։ Եթէ այս տարի նոցա վիճակին ամոքում չլինի, կը յուսահատին բոլորովին և գաղթականութեան հոսանքն չուտով կը պարպէ Հայաստանն և կը ցրուէ Թրքահայն։ Պէտք է նաև միտք բերել այն որ եթէ եւրոպական թեւարկութիւն չհասնի Թրքահայոց և ներկայ յոյզք և խոյզք ապարդիւն վերջանան, Թուրք կառավարութիւնն մինչև ցարդ եղածէն տարբեր փութով և կատաղութեամբ պիտի ջախջախէ և մահացունէ մեր ազգութիւն։

Գործելու տարի է այս տարի։ Պէտք է հարիւրապատիկն անել սովորական ժամանակաց մէջ գործուածին։ Ուսեալն և անուս, ընչեղն և անինչ, յեղափոխականն և ոչն, այս տարի չքմեղանք չունին ձեռնպահ կամ բաժանեալ մնալու։ Օ՛ն, ի գործ միաբան։

Ե

Եւ ի՞նչ է այժմ գործն։

Յառաջ քան զՍասնոյ կոտորածն՝ յերկու թեր բաժնուած էին գործող Հայք. կէսք դիւանագիտական ջանքերու կողմն էին, կէսք ապստամբութեան հարկին ջատագով՝ կը պնդէին թէ Եւրոպա ուշ չի դներ մեզ եթէ զէնքի չդիմեմք։ Այդ գինեալ ցոյցն այժմ կատարուած իրողութեանց կարգն անցած է։ Ապստամբութեան հեռուէն նմանող բան մի եղաւ ի Սասուն, հոն մի քանի քաջեր ինքնապաշտպանութեան համար զէնք առին աւազակ Քրդաց և ժանտ ոստիկանաց դէմ. այս դիմադրութեան չափազանց մեծ նշակութիւն, ապստամբական շարժման հա-

մեմատութիւններ ընծայեց Թուրք կառավարութիւնն և վարուեցաւ Հայերուն հետ որպէս ընդ ապստամբս։ Ուրեմն Հայք առանց իրօք ապստամբելու, նկատուեցան իբրեւ ապստամբ և կրեցին խուժ Քրդի ու դուժ Թրքի ճմլիչ և տնողորմ յարձակումներն — ջարդուեցան կանայք և երախայք անգամ։ Սոսկաց Եւրոպա, աչք և ականջք ազգաց մեզ դարձան։ Եւ ուրեմն ժամ է որ ներկայացուցնեմք նոցա մեր գանգատներ, մեր արդար պահանջներ։

Ապստամբութեան և յեղափոխութեան խնդիր չկայ ուրեմն այժմ։ Խնդիրն ներկայիս մէկ է— հանրային կարծիքն լուսաւորել, ժողովուրդներուն համակրանք ներշնչել և կառավարութիւններն ստիպել յօգնութիւն Հայաստանի։

Այս գործն անելու տարին է այժմ, և ուրեմն միաբան և ձեռն ի ձեռն գործելու տարի։ Այլ ևս յեղափոխականն չի կրնար ասել թէ պէտք է երթալ արիւն թափել. (բաց ի Հնչակէն որ ժամանակի փոփոխող հանգամանաց համակերպիլ չգիտէ և կը շարունակէ իւր փողն հնչել։) Այժմ խօսելու, գրելու, բողոքելու, հերքելու և հաստատելու տարին է։ Այժմ կրնան Հնչակ, Դրօշակ, Արմէնիա, Լառաէնի միաբան գործել։ Այժմ կրնան դիւանագիտականք և յեղափոխականք աջակցիլ։ Երբ ժամանակն ուրիշ բան պահանջէ, կրնան նորէն բաժնուիլ, բայց ընթացիկ տարւոյ մէջ կատարուելու գործին համար կրնան և պարտին միանալ։ Ներկայ պատմական ժամու պահանջն մէկ է, գործելու ուղղութեան գիծն մէկ է, և ժողովուրդն իրաւամբ կրնայ պահանջել որ գործիչք ի մի կեդրոն միանան և մեթոտով ու բարդեալ ուժով աշխատին զեւրոպա մղել ի միջամտութիւն։

Մեք այս կետի վերայ աւելի ծանրանալ չեմք ուզեր, մի գուցէ պնդումն յարձակում կարծուի։ Ժողովուրդն արդէն առ հասարակ արթնցած է, և Հնչակեանց լուրջ մասն ալ միութեան կարեւորութիւնն կը զգայ։ Կը յուսամք թէ ժողովուրդն ամեն կողմէ պիտի դիմէ գործիչներուն, և սոքա ալ պիտի յօժարին նորա արդար բաղձանաց համակերպիլ։

Զերազ, Յակոբեան, Թումայեան, Պէկնազարեան այժմ Անգլիա են. Փորթուքալեան ևս հեռի չէ անտի, և կրնայ երթալ հոն։ Դրօշակեաններու պետն ալ կարող է երթալ անդր։ Այդ վեցն մի յանձնախումբ կը լինին և յայտարարութիւն մի կ'ուղղեն առ գաղթականս ընդ հանուր, և սոքա, գաղութք և տեղական յանձնախումբք, պաշտօնական նամակներով կը ճանաչեն զկեդրոնն իբրև իրենց ներկայացուցիչ։ Այդ վեց անձինք կրնան մէկ ամսուան մէջ հասկացողութեան գալ և կազմակերպուիլ։ Իրենց գործունէութեան ծրագիրն պիտի լինի, կարելի է գուշակել, հետեւեալին նման բան մի—

1. Հայաստանի հարստահարութեանց ընդարձակ տեղեկագրութիւն մի հրատարակել հաստատուն և վստահելի եղելութեանց վերայ հիմնեալ։

2. Անգլիոյ և Սկովտիոյ, Ֆռանսայի և Գերմանիոյ, Իտալիոյ և Աւստրիոյ մէջ Հայոց վերայ ստենախօսել միթինկներու մէջ։

3. Անգլիերէն, Ֆռանսերէն և Գերմաներէն լրագրաց մէջ անդուլ պայքար մղել յօգուտ Հայաստանի։

4. Անգլիոյ և այլ մեծ Պետութեանց, ինչպէս նաև աւագ և մեծ արանց դիմումներ անել թէ թղթով և թէ ինքնին յանձնախումբն իբրեւ պատուիրակութիւն ներկայանալով։

Եթէ Հնչակեան և Դրօշակեան պետեր չուզեն այդպիսի կեդրոնի մի անդամ լինիլ, անտարակոյս իրենց հետեւողներուն մեծ մասին զայթակղութիւն պիտի պատճառեն և անոնց դրամական օգնութենէն պիտի զրկուին։

Այդ պարագայի մէջ կրնան Թումայեան, Յակոբեան և Զերազ միանալ ի Լոնտոն, իրենց մօտաւոր աջակից ունենալով Բարիզի Հայրենասիրական միութեան ատենապետն զՏիար Իսկէնտէր, և Թերեւս նաև զՏիար Փորթուգալեան, Մարսիլիայէն։

Մեք այդ յարդելի գործչաց միանալուն արգելք չեմք տեսներ, և պէտքն անհրաժեշտ կը համարիմք։

Եւ չեմք ալ կարծեր թէ այսպիսի սքանչելաւոր տարի մի, երբ Հայաստանի համար մահու կամ կենաց վճիռ պիտի արձակուի, մեր հայրենասէրներն անձնական առաջնութեան բաղձանօք կամ այլ այնպիսի նկատողութեամբք կը վարանին ի մի կեդրոնական մարմին կազմակերպուելու։

ԱՐԴԻ ԿԱՑՈՒԹԻՒՆՆ

Քաղաքական կացութիւնն ի Հայաստան յոյժ ծանր է և ճգնաժամական։ Հայկական Խնդիրն որ ի բազմաց հետէ դադրած էր զԵւրոպա գրգռելէ, արդէն անցած է նախնական աստիճաններն և այսօր առարկայն է որոշման և խորհրդեան Մեծ Պետութեանց։ Հայ փաստն այսօր կը կանգնի այն տեղուում ուր չէր երբէք յառաջագոյն, և յոր մղել էր ճիգն և բաղձանքն Հայ Հայրենասիրաց։ Այս առիթն պիտի ցուցնէ թէ ինչ զօրութիւն ունի Հայ փաստն առաջի գործնական տեսութեանց մեծ ազգաց։ Այս ելքէն են կախուած բարօրութիւնն և ապագայն հայ ժողովրդեան և համայն Արևելից։ Իրաց զայս վիճակն և զբնութիւն երբ քաջ ըմբռնեմք, երբ գիտակիցք եմք պատմական այս կարեւոր և ահագին ճգնաժամուն, երբ ի մի կողմանէ կը նշմարեմք պսակումն բոլոր մեր յուսոց և ձգտմանց և ի միւս կողմանէ սոսկմամբ երևակայեմք կարելիութիւն պարտութեան բովանդակ այս ցանկութեանց և կչռման ի յԱրևելս, յայնժամ կը զգացուիմք զգացմամբ ծանր պատասխանատուութեան որ կը հանգչի Հայութեան և հայ առաջնորդաց վրայ։

Այսպիսի ժամուն պատշաճ է որ ամբողջ ազգն միասին գործէ, և գործէ արիաբար և խոհեմութեամբ։ Անխոհեմութիւն այսպիսի ժամուն մահացու է և աններելի։ Անտարբերութիւն յայսպիսի ժամուն է ոճիր ընդդէմ ազգին և մարդկութեան։ Գիտեմք թէ ի գլուխ հանել Հայ փաստին յաղթութիւնն, կամ մինչ իսկ մասամբ բարւոքել զՀայաստանի վիճակն, չէ դիւրին ինչ գործել։ Բաց ի անխնամութենէ Եւրոպիոյ, կայ մեզ մեծ խոչընդոտն որ է Դրան ճարպիկ մեքենայութիւններն որով կը տքնի մոլորեցնել զԱշխարհ քաղաքակիրթ։

Դժբաղդաբար կան բազումք յԵւրոպա և կայ գոնէ մի անձն յԱմերիկայ որք քաջութիւն կը համարին կողմնակցել բռնակալին և բարբարոսին և չահագործել Հայաստանի թշուառ և հարստահարեալ վիճակը։ Մեք Հայքս կը բաղձամք որ անխառն արդարութիւն գործադրուի, որ ճշմարտութիւնն բոլորովին մերկանայ, և կը հրաւիրեմք բանաւոր վիճաբանութիւն և քննութիւն թէ Հայոց ընդհանուր խնդրոյն վրայ և թէ Սասնոյ մասնաւոր դիպաց վրայ։ Սակայն երբ համբաւաւոր մի լրաթերթ առանց քննադատութեան և առանց վաւերացեալ իրողութեանց անհոգութեամբ և անբացառութեամբ կը պարսաւէ մի փաստն հարստահարեալ ժողովրդեան մի և կը բռնցբօսէ և եղծանէ բանաւորութիւնն, դորա արարից մեք միայն զզուանք և արհամարհանք ունիմք, — մեք որ մեր ընկեալ վիճակում իսկ կը պարծիմք ճշմարտասէր և վեհ ոգւով։

Այսպիսի պարագայից տակ, սակայն, պարտիմք լուրջ և խոհեմ վարուիլ և հրապարակաւ չվիրաւորել զայնս որոց դէմ արդար վիշտ մ'ունիմք։ Զայդ թողլու եմք յարմար առթի երբ մեր բողոքն կրնայ ազդու լինիլ։ Մեր ջանքն առ այժմ յաւէտ լինելու է շահիլ ընդհանուր համարում և մաքառիլ Դրան յայտնի մեքենայութեանց դէմ։ Հանրային ժողովք և հանրային գրութիւնք, երբ կարող և բանիմաց անձանց կողմանէ առաջնորդուին, մեծապէս կ'օգտեն գործոյն։ Սակայն այս ամենայն անբաւական են, ցորժամ չիք մի կազմակերպեալ գործունէութիւն և հեղինակաւոր և պատասխանատու մարմին որ ստանձնէ գործն կանոնաւորապէս և կատարէ զայն ազդուութեամբ և խոհեմութեամբ։ Այսպիսի մի մարմին եթէ բաղձալի էր աստի չորս տարի առաջ, այժմ անհրաժեշտ է։ Հարկ չէ որ այս մարմինն ընտրուի և բծախնդիր և տգէտ ժողովրդեան զոհ լինի։ Նիւ Եորքի մէջ կարող և բանիմաց ազգայինք մատնանիշ կրնամք անել։ Հարկ է որ ի սոցանէ հինգ կամ տասն միանան, և իբր Յանձնախումբ կեդրոնական ստանձնեն գործն յԱմերիկա։

Մեր գործոյն բնութիւնն չփոթ և անորոշ անելու չէ։ Մեր գործն է այժմ մատնանիշ անել Սասնոյ կոտորածն իբր ապացոյց Դրան ապիկարութեան և անգգամ և անգութ քաղաքականութեան։ Պարտիմք հասկցնել թէ հայ ժողովրդեան բարօրութիւն զոհ եղած է Դրան քաղաքական նպատակաց, թէ Դուռն դրժած է իւր խոստումներն և թէ Հայ Ազգն այլևս չունի վստահութիւն ի Թուրք կառավարութեան։ Պարտիմք յերքել Դրան խարդախ փաստն, որ կը ջատագովուի Հէրալտէ, Թէ Հայոց նպատակն է ապստամբիլ,

ոչ զի կը հարստահարուին և կը կոտորուին, այլ քանզի գոգռուած են հայ գաղթականութիւններէ որոց միակ նպատակն է Հայ թագաւորութիւն մի վերահաստատել։ Պարտիմք պնդել թէ Հայք կը բողոքեն և կը խլրտին վասն զի կը հալածուին և կը հարստահարուին, թէ Հայոց ջանքն է զժողովուրդն ազատել բռնակալ և զեղծ իշխանութեան ճանկէն, և կը պահանջեն մի վարչութիւն որ ապահովէ նոցա կեանքն, պատիւն և ինչքն։ Նոցա վշտանքն ճանչուած են թէ Եւրոպայէ և թէ ի Բ. Դրանէ, զի սոքա դաշնագրած են թէ Հայոց վիճակն բարւոքման և պաշտպանութեան կարօտ է։ Նոցա պահանջն ոչ այլ ինչ է քան զայն զոր Դուռն խոստացած է գործադրել և զոր չէ գործադրած։ Եթէ Հայք կը փորձեն պաշտպանել զինքեանս ընդդէմ Քիւրտ աւազակաց և ապստամբիլ այն իշխանութեան դէմ որ այդ աւազակաց թեր ելնելով զօրք կը խրկէ զՀայս հնազանդեցնելու աւազակաց, Հայոց արարքն մարդկօրէն դատելով վեհ է և դիւցազնական, և, ըստ միջազգային օրինաց, թողրովին արդարանալի։ Միւս կողմանէ Դրան ընթացքն մարդկօրէն դատելով վատ է և անզգամ, և, ըստ օրինաց ազգաց, ոճրագործական։ Օրինական իրաւունքն Հայոց կողմն է, և Դուռն մարդասպանութիւն գործեց ջարդելով զՀայս որք իւրեանց պարտքն կը կատարէին և պահանջն կը ներկայացնէին։ Մարդասպանութիւն ներելի չէ, մինչ իսկ եթէ «կապարութիւն» մի է ոճրագործն։

Այս ոճիրն թէ մարդկութեան դէմ է և թէ ազգաց օրինաց և դաշանց դէմ։ քաղաքակիրթ մարդկութիւնն, բաց ի Հէրալտ թրքական բերանէն, արդէն իւր բողոքն բարձած է այդ խժդժութեանց և բռնութեանց դէմ։ Կը մնայ տեսնել թէ Եւրոպեան Տէրութիւնք ինչպէս պիտի պաշտպանեն իւրեանց անարգեալ պատիւն և յարգել տալ այն դաշինքն որով Դուռն յանձն առած էր զՀայաստան բարւոքել և պաշտպանել զՀայս ընդդէմ Քրդաց և Թրքաց։

Ցուն. 12, 1895, ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

Ց. Գ. Ոևէ խնամութիւն և ծանօթութիւն չունիմ Տօքթոր Տիգրան Սիւնեոյ հետ որ կը տեսնեմ թէ ի բանտի է ի Եոզղատ։ Տ. Ս.

ՍՈՒՐ ԱՌՆԼՈՒ ԺԱՄ Է

Հուիթմանէն և Սէյլամէն թղթակիցներ կը գրեն մեզ թէ երիտասարդք յուզուած են և պատրաստ են երթալ Հայրենիքն պաշտպանելու չարագործներու դէմ. և առ այս յորդորներ կը կարդացուին իրենց։ Նոյն միտքն գրեթէ ամեն հայ գաղթականութեան մէջ կ'երեւի։ Ոմանք Սասնոյ նահատակաց վրէժն առնուլ կ'ուզեն, այլք կը բաղձան յեղափոխական շարժման ցունց տալ։

Մեր կարծիքն այն է թէ առ այժմ գործելու լաւագոյն մեթոտն է ջանալ ժողովուրդներն, քրիստոնեայ ազգերն շարժել ի գութ Հայաստանի, որ կը լինի գրելով, հրապարակախօսութեամբ, աղերսագրով և պատգամաւորական դիմումներով։ Այժմ հարկ է կատարուած խժդժութեանց իրականութիւնն ապացուցանել աշխարհի, երկրայութիւններն փարատել, շարունակ փրոփականտա անել։ Այս միջոցիս զինեալ ցոյցի պէտք չկայ։ Արդէն եղածէն օգուտ քաղել ջանանք։ Եթէ Եւրոպա անփոյթ դտնուի դարման տանելու մեր վիճակին, յայնժամ կատաղութիւն պիտի գայ բոլոր Հայոց վերայ, և ամեն երիտասարդ ու ծերունի անգամ այնպիսի սոսկալի կերպով դէմ պիտի ելնէ թուրք բռնապետութեան որ ոչ միայն Ռուլթանը դահն կործանի այլ և Եւրոպա, ընդհանուր պատերազմի մէջ մղուելով, կրէ իւր անգթութեան պատիժն։

Այս միջոցիս գրչի պատերազմ պէտք է, ոչ թէ սրոյ։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 24 Դեկտ. 1894

Աւետի՛ս ձեզ. Ազգային Երեսփոխանական Ժողովն գումարուեցաւ նորէն։ Աչքերնիդ լո՛յս. նորէն պատրիարք ունինք, արժանաւոր պատրիարք։

Ժողովը տեղի ունեցաւ Մայր եկեղեցւոյն մէջ, Դեկտ. 19ին, և նախ Դիւանի կազմաւորման ձեռնարկեց, ընտրելով ատենապետ զԳարրիէլ Էֆ. Նորատուկեան, և դեր-ատենապետ զՌէթէոս Էֆ. Պէրպէրեան, նշանաւոր ազգային գրագէտն

ու գործիչ։ Ապա պատրիարքի ընտրութեան ձեռնարկելով, ներկայ 76 երեսփոխականաց 67ին քուէիւքն պատրիարք հռչակուեցաւ

ԱՄԵՆ·ՄԱՏԹԷՈՍ ՍՐԲԱԶԱՆ ԻԶՄԻՐԼԵԱՆ

և այս ընտրութիւն անյապաղ վաւերացաւ Բ·Դռնէն։

Հա՞րկ է ըսել թէ ազգային գործոց անկերպարան վիճակին այս անակնկալ կերպաւորումն Սասնոյ Հայերուն կը պարտինք։ Անոնց զոհերուն շնորհիւ է որ Ազգային ժողով կրցաւ գումարուիլ, և շնորհալի, հեռաւոր Բ·Դրան անհաճոյ եկեղեցական մը, յաթոռ Կ·Պոլսոյ Պատրիարքութեան կրցաւ կոչուիլ— մինչ անդին թրքասէր Բարթուղիմէոս, այնքան զօրաւոր յոյս տածած լինելէ յետոյ, հով կըլլայ 3 քուէ շահելով, միայն երեք։

Սասնոյ մեծադղորդ անցքն Եւրոպան արթնցուցին։ Տէրութիւնք և ազգք Հայաստանի վրայ կը խօսին և կը խօսին· մեծանուն քաղաքագէտներ, ազդեցիկ թերթեր սկսան աղաղակել թէ Հայաստան ինքնավար պէտք է լինի, իշխանապետութեան վերածուի ևն·ևն։ Այս ազմուկէն Փաշիշահին սիրտը փորը ինկաւ· «եամա՛ն, լանէթ իւզիւնիզէ» ըսելով հրաման տուաւ որ թաղուած Ազգային Սահմանադրութիւնը գերեզմանէն հանեն, իբրև փոխարինութիւն Սասնոյ մէջ անթաղ մնացած 2,000 Հայոց, և Երեսփոխանական ժողով գումարուի, և ընտրեն պատրիարք ո՛վ որ կ՚ուզեն։

Այսպէս փաշիշահը քիչ մի կակղեր է, Աստուած տայ որ նորէն չփատնայ։ Ընդհակառակը, պէտք է լման մի զղջայ մեզի ըրածներուն վրայ և շնորհքով փոխարինութիւն մ՚ընէ։ Հայերուն հետ չի կրնար հուն ելնել։ Բոլոր քաղաքակիրթ ազգերը մեզի թեր կ՚ելնեն։ Ադէկ կ՚ըլլայ որ խելքը գլուխը ժողվէ և Հայաստանի համար քրիստոնեայ կառավարիչ կարգէ Եւրոպացի իշխան մը, մեծ Տէրութեանց հաւանութեամբը։ Այն ատեն կը տեսնէ թէ ինչպէս նորէն իրեն սիրելի և օգտակար կը դառնան բոլոր Հայերը, որոնցմէ աղէկ բարեկամ երբէք չէ ունեցած յանցելումն և չպիտի ունենայ առ յապայս, եթէ անոնց սիրտը կոտրելու տեղ չահիլ ջանայ։

ՔԱՐ

ՆԱՄԱԿ Ի ՊՈՒԼԿԱՐԻՈՑ

Բուսչուք, 18 Դեկտ·1894

Տէր,

Կեդրոն կազմելու մասին մեր գաղթական Հայոց մէջ եռանդուն ջանքեր եղան այս միջոցիս, ջանքեր որ խորհրդոյ սենեակի պատերէն դուրս շատ ոյժ ունենալ չեն խոստանար առ այժմ։ Նոյ·28ին տեղւոյս Ընթերցարանում կայացած արտակարգ ժողովի որոշումն յօդս ցնդեցաւ և նոր որոշումներ տրուեցան։ Այժմու որոշումն է յորդորել Պուլկարաբնակ և այլ տեղեաց հայ գաղութներն որ իւրեանց շրջանում արդի երեք գործիչներին՝ Հնչակի, Դրօշակի, և Արմէնիայի Միութեան հրաւէր կարդան՝ միահամուռ ժողով անելով։

Նաև խնդիր յուզուեցաւ այն հարցի մասին թէ ՀԱՅՐ թերթն Միութեան բերան հռչակուելո՞ւ է թէ ոչ։ Ներսիսի ժամանակին կարեւոր գործիչներից մին, որ վաստակաբեկ հոս ինկած է, ձայն բարձրացոյց թէ ՀԱՅՐ ոչ միայն արժանի է Ազգային Միութեան օրկան լինելու, այլ նոյն իսկ ազգի մեծագոյն լուրջ դասուն վստահութիւնն գրաւած է և արդէն նոցա օրկանն է, և իմ պատահած տեղերիս լուրջ դասակարգը միշտ ակնածանօք խօսել են ՀԱՅՐի նկատմամբ։ Միայն հարկ է որ Ազգային Կեդրոնական մարմին մի հաստատուի և Հայք նկատուի Ազգային Միութեան օրկան։

Նաև խնդիր յարուցուեցաւ հանգանակուելու դրամի գործածութեան վերաբերութեամբ։ Եթէ երեք գործիչ կարծեցեալ կուսակցութիւնք չընդունին մեր հրաւէր և չմիանան, ի՞նչ համոզմամբ գոյացած դրամն անոնց բաշխենք։ Այս առթիւ սմանք սկսան Արմէնիայի դէմ սաստիկ խօսիլ, որ աւելորդ կը համարիմ պատմել։ Մի քանիներ կը պնդէին թէ նա կուսակցութիւն չի ներկայացներ և դրամէ անոր բաժին հանելու չէ· մի քանիներ ուրիշ միտք կը յայտնէին։ Այսպէս սմանք վիրաւորուեցան և ապա հաշտուեցան։

Այսօր տեղացիք Նիկոլա Բ· Ռուսաց կայսեր առաջին տօնախմբութեան (զի այսօր Ս·Նիկողոսի տօն էր Ցունադաւանաց) առթիւ գոհաբանական աղօթքներ կարդացին։ Մի քանի երիտասարդներ հառ խո-

սելու պատրաստուած էին, բայց չկարացին, վասն զի մի քանի անհմուտ մարդիկ միթինկ անելու թոյլտուութիւն խնդրած էին քաղաքապետից և այդ միթինկ բառն «հանդէս» բառի տեղ գործածելով խրտուցած էին պաշտօնեայն։ Այնու հանդերձ պատրաստեցին մի հեռագիր շնորհաւորելու Զարի տօնախմբութիւնն, որ պիտի ուղարկուի կամ Վեհ. Հայրապետի միջոցով կամ ուղղակի Զարին։ Այստեղ ալ, ինչպէս ի Վառնա, Սասունի նահատակաց համար հոգեհանգիստ կատարուեցաւ

Դրօշակի ներկայացուցիչ կեղծանուն Գրիգորեանցն որ, Թրքի թելադրութեամբ, բանտարկուած էր ի Ռումանիա իբր ոչնչական, ազատուած է բանտէն։

ԹՂԹԱԿԻՑ

ՔՐՔԱՑ ԴԱՂՏՆԻՔՆ

Մինչև ցարդ շատեր հրապարակ ելան ազգային արդար դատն պաշտպանելու և բազմատեսակ կարծիքներ յայտնեցին։ Ես ալ, այս նոր տարւոյս սկիզբն, կուգամ մեր սիրեցեալ և պատուական ՀԱՅՐի միջոցաւ իմ խոնարհ մէկ գաղափարս ներկայացնել ազնիւ ազգայիններուս։

Ի՞նչ գաղանիք է այն որով թշնամին թև առած, քաջալերուած, իւր դարաւոր հարստահարութիւններն սաստկացուցելով կը սաստկացունէ մեր ազգին դէմ, և այնքան աւրեց մեր տուն։

Թշնամին, այն է Թուրքն, ունի մի Ալլահ, մի մարգարէ, մի գուրան, մի հաւատ, մի եկեղեցի, մի կրօնք։ Այս բանին շնորհիւ նորա ոյժ բաժնուած չէ, և կեդրոնացած զօրութեամբ կը մաքառի քրիստոնէիցս դէմ։ Իսկ մենք Հայերս, որ լուսաւորեալ և ազատամիտ կը համարուինք, ունինք մեր չաստուածները, և տեսակ տեսակ կուռքեր ստեղծելով կը պաշտենք։ Միտքս սխալ չհասկնաք։ Մենք մեր կիրքերուն, անձնական հաշիւներուն, անձնական պատիւին, կամ մեր սիրած կուսակցութեան իբրեւ չաստուածներու կը ծառայենք։ Եւ որ աւելի սիրեցուցիչն է, կը պնդենք իւրաքանչիւրս թէ մեր պաշտածն է, մեր գործիչ առաջնորդն է չաստուածներուն կամ մարգարէներուն է՛ն մեծը, կամ թէ միակ ճշմարիտը, իսկ միւսները կեղծ են ևն։ Իրար վար կը զարնենք, իրարու պատիւ պզտիկցնելու համար շատ նեղութիւնյանձն կ՛առնունք։ Այս մեթէ կը վայելէ՞։ Մենք մինչև ե՞րբ չպիտի սովրինք իրարու պատիւ և արժէք ընծայել։ Ես ալ «Հայքի» մասին շատ բարձր համարում ունիմ, բայց և այնպէս միւսները վար զարնել չեմ ուզեր։ Հայքը շատ գովելու ալ կը զգուշանամ, չըլլայ թէ ուրիշները անուղղակի վիրաւորեմ։ Իմ կրտսեր եղբայրներուս խրատ կուտամ իբր ծեր և փորձառու մարդ, եթէ կը ներեն, որ չափազանցութենէ զգուշանան։ Ուրիշ մէկ կուսակցութեան մը պատկանելնուն համար թող չի կարծեն թէ Հայքի դէմ խօսիլ ու անոր բաժանորդները պակսեցնել իրենց առաքինութեան նշան է։ Բիչ մի աւելի վեհանձն եղէք, սիրե՛լիք, և ձեր կարծիքին չհամաձայնող բայց բանիմաց և ազատախօս այս թերթն ալ գոնէ բաժանորդագրութեամբ քաջալերեցէք։ Ասանկով է որ մեր ամեն կուսակցութեանց և գործիչներու մէջ սէր և համակրութիւն պիտի աճի և ազգին մեծ գործը ի գլուխ հանելու համար անոնք պիտի կրնանք միացնել։

Եթէ այս վեհանձն և սիրոյ շաւիղն բռնենք Նոր Տարւոյս սկիզբէն, վկայ է Տէրը որ մեր ազգային ազատութեան Ս. գործին յաջողութիւնը երաշխաւորած կը լինինք և մեր դարաւոր սուգը բերկրութեան կը փոխուի։

Ահա, պատուակա՛ն հայրենակիցք իմ, այս է իմ տարեգլխու ջերմագին բարեթութիւնն։ Ո՛վ որ ականջ ունի՝ թող լսէ։

ՂԱԶԱՐՈՍ ՅԱԿՈԲ ՁՈՓՈՒՐԵԱՆ

Տէնպրի, Յունուար 1, 1894

ԿԼԱՏՍԹՈՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեծ Ծերունին իւր ծննդեան 85րդ տարեդարձին առթիւ հազարաւոր շնորհաւորական նամակներ և հեռագիրներ ստացաւ։ Նոյն օրն Դեկտ. 29ին, ընդունեցաւ Լոնտոնի և Բարիզի Հայերէն պատուիրակութիւն մի, որ արծաթ բաժակ մի նուիրեց Պատ. Սթիվըն Կլատսթընի, նախկին նախարարապետի որդւոյն, (որ Հաւարարանի եկեղեցւոյն եպիսկոպոսական երէցն է) ի ցոյց երախտաճանաչութեան այն համակրանաց զոր իւր հայրն կը ցուցնէ հարստահարեալ Հայոց։

ի պատասխանի պատուիրակութեան ուղերձին երկարօրէն խօսեցաւ Վեհ Ծերունին։ Թող չասեն ինձ, ասաց, թէ ազգ ազգի վերայ իշխանութիւն չունի։ Ամեն ազգ, այո, ամեն մարդկային արարած, իշխանութիւն ունի յանուն մարդկութեան և արդարութեան։ Եթէ մինչև ցայնժամ լռած էր, պատճառն այն էր որ ինքն լի վստահութիւն ունէր թէ Կառավարութիւնն կը ձանաչէր իւր պարտք։ Եթէ պատմուած խժդժութիւնք ճշմարտուին, այլ ևս ժամն հասած պիտի լինի որ մարդկութիւնն իւր պժգանքն լսելի գործէ Թուրքիոյ Սուլթանին ականջներուն, և զգացունէ նմա հետևուած ընթացքին յիմարութիւնն։ Ի վերջ բանից ասաց «Թուրքիոյ պատմութիւն սըխուր և ցաւագին պատմութիւն մ'է։ Իմ օրովս իսկ Թուրք Պետութիւնն յԵւրոպա աւելի քան կէսն կորոյս այն հողոյն որում տէր էր երբ ես ծնայ։ Եւ զի՞· պարզապէս վասն զի Ամենազօր Աստուծոյ ձեռքն արձանագրած է նորա զեղծմունքն, անիրաւութիւնն բղջախոհութիւնն և ամենագարշելի անգթութիւնն։ Եթէ նոր ամբաստանութիւնքն ստուգուին, սոսկման տիեզերական աղաղակ մի պարտի արձակուիլ անպատուեալ մարդկութեան կուրծքէն ընդդէմ այս արարուածոց և ժանտագործութեանց։ Եթէ իրողութիւնքն հաստատուին, պէտք է երկաթէ տառերով գըրուին աշխարհի արձանագրութեանց մէջ թէ Կառավարութիւն մի որ այդպիսի գազանութիւններ կը թոյլատրէ և կը քօղարկէ, անպատուութիւն է Մուհէմմէտ Մարգարէին, անպատուութիւն է մարդկային ցեղին։ Ապաքէն ուժգին լեզու է այս· սակայն երբ եղելութիւնք ուժգին են, պէտք է ուժգին լեզու գործածել։ (լսեցէ՛ք, լսեցէ՛ք)։ Ցորչափ ձայն ունիմ, պիտի հնչէ այն յօգուտ մարդկութեան և արդարութեան։ Կը մաղթեմ ձեզ ամենայն օրհնութիւն ի սրտէ և ամենայն բարօրութիւն ձեր Ազգին, որքան և մութ լինի ներկայն։»

Կլատսթոնի այդ ճառ աստի անգլիական կառավարութեան ուղղեալ մի ազդարարութիւն է, և անտի՝ Սուլթանի երկու երեսներուն ապտակ է։ Փաստիչհն չատ կսկիծ զգալով դիմեր է անգլիական կառավարութեան որ ժխտէ Վեհ Ծերունւոյն խօսքերն, և պատասխան ընդուներ է թէ Կլատսթոն, իբրեւ անդամ խորհրդարանի, ազատ է իւր կարծիք յայտնելու մէջ։

Կլատսթոնի ճառին այն խօսքն թէ Թուրք կառավարութիւնն անպատուութիւն է Մուհէմմէտ Մարգարէին, ունի մասնաւոր դիտում և այժ— որ է գըրգռել արաբներն յապստամբութիւն ընդդէմ Սուլթանի ամբարիշտ կառավարութեան։ Եւ ապաքէն Թուրքն ո և է բարոյական իրաւունք չունի ո և է ցեղի տիրելու, զի միայն ֆիզիքական ուժով կը տիրէ, և այդ այժն ալ գազանի պէս կը գործածէ։ Ո՛ր ցեղ որ կարողէ Թրքին դէմ ապստամբութեան դրօշ պարզել, առանց ինքզինք ջնջման վտանգին ենթարկելու, մեծ առաքինութիւն կը գործէ ապստամբելով։

ԱՀԱԳԻՆ ՄԱՍ ՄԻԹԻՆԿ ԵՒ ՄԵԾ ԶԱՅՐԱՑՄԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՑ

ի 18 Դեկտ· 1894

(Շարունակեալ նախորդ թիւէն)

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՏՐ· ՀՕԼԻ

Ամենախորին համակրութիւն կը տածեմ Արարատի ժողովրդին համար և ամենախորին զգուանք ունիմ այն անիծեալ ատրութեան դէմ որ եղեռնագործութիւնը իրեն գործ արած է միշտ, յանցելումը ինչպէս ի ներկայիս։ Տուն մի չէ նեղութեան մատնուածն այլ 2 միլիոն ու կէս ժողովուրդ։ Եւ ի՛նչպիսի, խաղաղասէր, աշխատասէր, ընտանեսէր, ճարտար և ուշիմ նկարագրեալ ժողովուրդ։ Այս սրահի լիութիւնն բաւական կ'ապացուցանէ թէ հանրային զգացումն արթնցած է Հայոց նկատմամբ (ծափք)։ Ոմանք կը վարանին թէ մեր երկիրն իրաւունք չունի թերեւս Թուրքիոյ գործերուն խառնուելու։ Ինչո՞ւ։ Դիցուք թէ փողոցին մէջ կը

հանդիպիս կռուի տեսարանի մի, մի ուժով և յաղթանդամ մարդ կը գանակոծէ չարաչար մի դեռատի պատանեակ. կը մօտենաս և ուժովին կը հարցնես— ինչո՞ւ կը ծեծես այս աղայն։ Եւ չարագործն քեզ կը նայի ապշութիւն կեղծելով և կը պատասխանէ.— ես քեզ չեմ ճանաչեր. մեք երբէք մեր այցաքարտերն փոխանակած չունիմք։ Ինչ՞ պատասխանել կը վայելէ այսպիսի առարկութեան. ես մարդկային էակ մ'եմ, դուալ մարդկային էակ մ'ես, թէպէտ այժմիկ իբրեւ գազան կը գործես (ծափք)։ և ես իրաւունքով կուգամ իմ ընկերս փրկել քո անգութ ճիրաններէն (ծափք)։ Կը տեսնեմ, Տիկնայք և Տեարք, թէ միաքս քաջ կ'ըմբռնէք։ Շատ կարեւորութիւն չտանք միջազգային ձեւակերպութեան և վեր վերցուցենք մեր ձեռքերն ու մեր ձայներն։ (բուռըն ծափք)։

Այնուհետև մեծանուն հովիւն կարդաց ժողովին քուէին ներկայացուող առաջարկութիւններն.—

ՈՐՈՇՄՈՒՆՔ

Ըստ որում ամենավստահելի աղբիւրներէ եկած տեղեկագրութիւններէ յայտ է թէ 25 գիւղեր ի Հայաստան աւերուած են ի ձեռն թուրք զօրաց և հազարաւոր անմեղ արք, կանայք և մանկունք ի Սասուն ջարդուած են անգթօրէն. ուրեմն,

Կորոշեմք թէ մեք, Նիւ Եորք քաղաքի և շրջակայից քաղաքացիքս, հաւաքեալ ի մաս-միթինկ, կը մատուցանեմք մեր ջերմագին համակրութիւնն Հայաստանի ժողովրդեան։

Եւ ըստ որում այսպիսի մեծաքանակ կոտորածներ բազում անգամ տեղի ունեցած են թուրք կառավարութեան գիտութեամբն ու հաւանութեամբն և հակառակ դաշնագրական յանձնառութեանց.

Կորոշեմք թէ Պէռլինի Դաշնագիրն ստորագրող Տէրութեանց կոչում կ'անեմք որ անյապաղ գործադրեն 61դ յօդուածի արամադրութիւնն և մասնաւորապէս կոչում կ'անեմք Անգլիոյ կառավարութեան կատարել իւր պարտաւորութիւն զոր յատկապէս ևս յանձն առաւ Կիպրոսի դաշնագրով։

Կ'որոշեմք թէ սրտագին կոչում կ'անեմք մեր իսկ կառավարութեան ձեռք առնուլ յանուն մարդկութեան ամեն միջոց որ հակառակ չէ մեր արտաքին քաղաքականութեան, վերջ տալու այն հալածանաց որուն համար թուրք կառավարութիւնն պատասխանատու է, և թէ մեր այս որոշմանց անմիջական և ազդու նկատառութիւնն կը թախանձեմք։

Կորոշեմք որ այս որոշմանց վաւերացեալ օրինակն յղուի Միացեալ Նահանգաց Նախագահին, խնդրելով միանգամայն որ Պետական քարտուղարութեան միջոցաւ նոյնն հաղորդուի նաև մեծ Տէրութեանց ներկայացուցիչներուն։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԳՆԴԱՊԵՏ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՊԷՅԹԸԼԻ

Այս երեկոյի խօսուածներէն կը տեսնուի թէ թուրքն ուրիշ բանի չի գարբայց միայն թաղուելու (ծափ)։ Ամեն չարիք իւր դարմանն ունի. և թուրք կառավարութեան դարմանն ալ այդ է։ Գրգռիչ դեղերն 50 տարի տրուեցան ի զուր։ Թ. կառավարութիւնն թող հո՛ղն մտնէ (ծափք և կանչք)։ Սուլթանն ալ ի միասին (ծափք)։ Ինչ՞ կառավարութիւն, որ թող չի տար կանոնաւոր թերթ մի անգամ հրատարակել, և չարագործներու առաջնորդներն շքանշաններով կը վարձատրէ (ամօ՞թ)Ի՞նչ հիւղ։ Այլևս ո՞վ կարէ հաւատալ նորա սնամէջ խոստմանց. Թուրքն միայն մէկ բանի մէջ ինքն իրեն համաձայն է— սատլու մէջ (ծափք)։

Անգլիա երկուք է. մին ազնիւ, առաքինի (ծափք). միւսն արծաթասէր, անգութ, վաճառաշահող։ Մեք անգութ Անգլիոյ դէմ կը բողոքեմք առ ազնիւ Անգլիան որ այլ ևս անարդ և անմիտ թ. կառավարութեան թիկունք չլինի։

Բայց եթէ մարիկ անող չլինի, թող գիտցած լինին թէ յայնժամ այս մեծ մարդասիրական գործոյն մէջ մեք ալ միջամուխ պիտի լինիմք։ (երկար և սաստիկ ծափահարութիւնք։)

Օրիորդ Պոզէ երգեց «Իմ Հայրենիք զիս կը կանչէ»

Եւ որոշմունք քուէի դրուելով միաձայնութեամբ ընդունուեցան։

Վերջին ատենախօսն եղաւ զօրավար Օ'Պէրն, որ ևս շատ ուժգին սճով խօսեցաւ, և ժողովն գոհունակութեամբ ցրուեցաւ։

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ

Սասնոյ արհաւրաց մասին ցուցուած երկբայութեան բոլոր յանցանքն օտարաց վերայ չձգենք։ Մեք Հայքս ալ, վախեմ, մեր բաժինն հանգանակած եմք այս թուլացուցիչ երկբայութիւններն յառաջ բերելու։ Հայոց, նոյն իսկ ուսումնականաց, անճշդասէր իմացական սովորութիւններն մեզ ծանօթ են. ոմանք չափազանցելու չեն խղճմտիր հանրային կարծիքն արհաւրօք ցնցելու դիտմամբ։ Այս անբարեխիղճ, հակագիտական և միանգամայն վնասակար միտման դէմ քանի քանի անգամ գրած եմք, սակայն յայտնի չէ թէ ո՛րքան լսելի եղած եմք ինքնահաւաններու։ Եթէ այդ դէպքերու ահաւորագոյնքն վերջնականօրէն հերքուին և մեր դատին վնաս ծագի, ի հարկէ մեղաւոր մեք Հայերս եղած պիտի լինիմք։

ՄՇԱԿի մէջ կը կարդամք մի ցաւալի օրինակ.—

«Կարսից մեզ գրում են. «կարո՞ղ էք երեւակայել որ հայ վաճառականը շահախնդրութեան նիւթ դարձրած լինի Թիւրքաց Հայաստանում կատարուող բարբարոսութիւնները։ Անցեալները լուր տարածուեց այստեղ թէ Երզրումի մէջ եւս Թիւրքերը կոտորել են Հայերին։ Լուրի հետ կցած էր մի ամբողջ վէպ։ Անցաւ մի քանի օր և պարզուեց որ հայ վաճառականներից մէկը, որը կարծեմ ալիւր տեղափոխում է այն տեղ, կամենալով որ դրա մենավաճառութիւնը միայն իրեն մնայ և ուրիշները ետ քաշուին, հնարել էր այդ կեղծ լուրը։»

Նոյն գանգատն կը լինի Սփրինկֆիլտէն, ուրկէ կը գրեն մեզ.—

Ուրախ եմ որ ՀԱՅՔիւ յորդորած էք վնասակար հրատարակութիւններ անելէ զգուշանալ. բայց կ'երեւի թէ Հարթֆըրթի Պարոնը չկարդաց։ Յունուար 8 թուով Պոսթոնի թերթերուն մէջ կարդացինք թէ նոյն Հարթֆըրդցի Պարոնը թերթերու մէջ հրատարակեր է իբր թէ ինքը նամակ ընդունած ըլլայ Տաճկաստանէն որպէս թէ 29 ժողովական եկեղեցիներ գոցուած են Թուրք կառավարութեան միջոցով։ Ուրիշ քանի մը այլանդակ հրատարակութիւններ ալ ըրած է այս Պարոնը բոլորովին Հայ դատին վնասաբեր։ Ա.

Այդ Հարթֆըրդցի Պարոնն անձամբ ճանաչող երիտասարդ մի (Նիու Եորքէն) մեզ ծանոյց թէ այդ հայ կեղծող Պարոնն որ Հարթֆըրդի մէջ սուտ յուրերու գործարան է բացեր, Յոյն է և հայրն ու մայրըն յոյն են։ Արդեօք Հարթֆըրդի մէջ չնորքով մի Հայ չի՞ գտնուիր որ այդ ստայօդ պարոնին ազդու դաս մի տայ, և ի հարկին լրագրաց մէջ խայտառակէ զինքըն։

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՎԱՍՆ ՍԱՍՆՈՅ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Ի Ս. Բարթողիմէոս Եկեղեցւոջ

Դեկտ. 30ին Պատ. Տր. Կրիրի եկեղեցւոյն երեկոյեան պաշտամունքն յատկապէս նուիրուեցաւ ի հանգիստ հոգւոց Սասնոյ նահատակաց։ Հանդիսաւոր էր պաշտամունքն ուր 300 Հայեր և իբր 1,200 Ամերիկացիներ ներկայ էին։ Երկու սեռէ երգչուհեաց խումբքն, շապիկ հագած, եղանակեցին պարագային պատշաճ շարականներ, մատուցուեցան աղօթքներ, և ապա Պատ. Կրիր ատենախօսեց, ցուցնելով թէ ամեն ով որ մարդկային բնազդում կը կրէ, անշուշտ կը համակրի Հայ ժողովրդին որ այնպիսի դաժան գազանութեանց ենթարկուած է։ Ինքն իւր աչօք կարդացած լինելով Հայաստանէն ի գրչէ միսիոնարաց ստորուած նամակներն, աներկբայ կը հաւաստար խժդժութեանց իրականութեանն։

Եպիսկոպոս Փոթթըր, ներկայ գտնուիլ չկրնալով, համակրական նամակ մ՝ուղղած էր զոր Պատ. Կրիր կարդաց ի լուր ժողովականաց։

Ապա Պատ. Եուհաննա, Սիւրիացի երէցն որ մի քանի տարիէ ի վեր Ս. Բարթողիմէոսի եկեղեցւոյն հովանւոյն ներքև խումբ մի Հայոց հոգեւոր առաջնորդն է, համառօտիւ Հայերէնի թարգմանեց Պատ. Կրիրի ատենախօսութիւնն։

Ատենախօսեց նոյնպէս Պատ. Մաք Քրիւ, որ ի Հնդկաստան տարիներով գործած և Մահմետականներն ճանաչած լինելով՝ կարող էր միւսիւլման Թրքաց մոլեռանդութեան չարաղէտ արդիւնքներն ըմբռնել և նկարագրել դիւրութեամբ։

Վերջին ատենախօսն էր Վսեմ. Ջանսի Տիփիու, Նիու Եորքցի միլիոնատէրն որ,

միլիոնատերաց մէջ բարձր դիրք ունի իւր քաջ ուսումնականութեամբ և մարդասիրական զգացմամբ։ Նորա անուն բովանդակ Ամերիկայի և Եւրոպիոյ մէջ ծանօթ է։ Մասնաւոր մխիթարութիւն էր Հայոց լսել այսպիսի հռչակաւոր աշխարհականի մի հայասէր ասենախօսութիւնն այնքան եկեղեցական շրթունքներէ արձակուած բողոքներէն յետոյ։ Տիար Տիփիու, իբրև հրապարակախօս ևս մեծ համբաւ կը վայելէ յիրաւի։ Զայնի լիութիւնն, զտութիւնն, արտասանութեան ճարտար ելևէջքն, վայելուչ ոճն, խորին մտքերն, ազնիւ զգացումներն մի սքանչելի ամբողջութիւն կը կազմէին և բոլոր ունկնդիրներն կը դիւթէին։ Կ'արժէ որ այսպիսի աւագ անձնաւորութեան մի պերճախօս ատենաբանութիւնն Հայաստանի վերայ տեղեկագրեմք ամբողջ։ Զայդ կը խոստանամք անել մեր յաջորդ թուով։

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Յունուար 12ին Հայոց ժողովի մի մէջ խնդիր յուզուած է թէ Նիւ Եորքի Հայ Գաղթականութեան անունով խօսելու և գրելու պաշտօն ունեցող Յանձնախումբ մի պէտք է կազմել։

Յընթացս երկար վիճաբանութեան ոմն փաստաբանած է թէ Հնչակեաններն պարտին դուրս թողուիլ այդ Միութենէ, վասն զի նոքա Հայ չեն, ևն. ևն.։ Ուրիշ մի ջանացեր է համոզել թէ այդ գաղթային Միութիւնն պէտք է լինի «Ֆիլարմոնիք» ընկերակցութեան անուան և դրոշակին տակ։

Տեղական կեդրոնացմանց ջանքերն յոյժ գովելի են, բայց վերոյիշեալ ժողովին մէջ ցուցուած ոգին արդարև պարսաւելի և տխրեցուցիչ է։

Տղայական և անիրաւ բան է Հնչակեաններն Հայ չեն ասել։ Պէտք չէ չփոթել մեր Հնչակեան կոչուած եղբայրներն Հընչակի օտարամիտ խմբագրութեան հետ։ Մեզի ծանօթ Հնչակեաններն ընդհանրապէս չեն ուզեր որ Հնչակ սոսիալիզմ քարոզէ և ուրիշ Հայերէ վար չեն մնար Հայրենասիրական զգացման կողմանէ։ Ի՞նչ անիրաւ և անսիրալիր հակառակութիւն է, ուրեմն, զոր ոմանք կ'ուզեն Հնչակեանց դէմ, մանաւանդ այսպիսի ժամանակ մի, երբ սիրով և փոխադարձ ղիջողութեամբք ուժերն կեդրոնացնելու հարկն աւելի քան երբէք զգալի է։

Իսկ անոնք որ կը ջանան իրենց ընկերութեան ծոցին մէջ ամփոփել ներկայ պատմական ժամանակի ահագին գործունէութիւնն, երկու բան կը յայտնեն։ Նախ չգիտեն թէ այդու իրենց մասնաւոր ընկերութիւնն պայթման վտանգին կ'ենթարկեն իճողելով զայն չափազանց խոշոր պահանջներով. և երկրորդ, կը կարծեն գուցէ թէ ժողովուրդն չի նշմարեր թէ այդպիսեաց փափաքն ոչ թէ իրական Միութիւն է, այլ իրենց մասնաւոր ընկերութեան աճումն ու փառաւորումն ի ծախսը միւսներուն։

Եթէ Նիւ Եորքի Հայերն կ'ուզեն իրօք գործել որպէս ճգնաժամն կը պահանջէ, պէտք է միանան. և եթէ միանալ կ'ուզեն, պէտք է որ այժմ գոյ եղող զանազան ընկերակցութիւններն հրաժարին հրապարակային զատ զատ ժողովներ անելէ։ Այդ համոզմամբ է որ Խրիմեան Միութիւնն հրապարակային ժողով անել չուզեր։ Այդ համոզմամբ է որ ՀԱՅՐի խմբագիրն այդ մասնաւոր ժողովներու ոչ մէկուն ներկայ կը գտնուի, զի դոքա ներկայ տարւոյ պահանջներուն չեն պատասխաներ, և իբրեւ ժամավաճառութիւն վնասակար իսկ կը թուին։

Խրատ կուտամք ուրեմն որ Հայկական Միութիւնն, իբրեւ հնագոյն տեղական ընկերութեանց, օրինակ տայ, առ ժամանակ մի դադրեցուցանելով իւր հրապարակային ժողովներ. նոյնպէս թող անեն Հնչակեանք, Խաչակիրք ևն։ Եւ այս ամենն բոլոր գաղթականութեան հետ, մէկ մեծ Հօլի մէջ գան ի մի վայր, և վճին սիրով ու որոշեն խոհեմութեամբ թէ ի՞նչ է ներկայի մէջ մեր գործն և ինչպէս պէտք է ի գլուխ հանել զայն։ Ժողովներն ամենեւին այս կամ այն ընկերութեան անունով պէտք է չլինին, և ոչ ալ մէկ կամ միւս ընկերութեան պաշտօնէից հրաւէրովն։

Միութեան անկեղծ ջանքի, ինչպէս պէս շատ ուրիշ կողմանէ, Նիւ Եորքի գաղթականութիւնն բաւական յետնեալ կը մնայ դժբաղդաբար, մինչ ուրիշ մի քանի գաղթականութեանց մէջ եսականութիւնն տեղի տուած է միութեան գաղափարին։

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ, ԿԻՍԱՄՍԵՕՅ ԹԷ ԱՄՍՕՐԵԱՅ ՊԻՏԻ ԼԻՆԻ «ՀԱՅԿ»

Այլ և այլ կողմէ փափաք կը յայտնեն որ ՀԱՅԿ ամիսն երկու անգամ հրատարակուի, թէպէտ բաղկանայ 8 երեսէ փոխան 16ի, ինչպէս առաջին երկու տարիներն։

Սակայն պէտք է գիտնալ թէ բարի փափաքներն ի գործ դնելու համար միջոցներ հարկաւոր են։ 250 բաժանորդի համար թերթ հրատարակել մեծ անպատեհութիւններ ունի, չասեմ անպատուութիւն։ Ամերիկայի Հայոց մէջ կրնան 500 բաժանորդներ գտնուիլ ՀԱՅԿԻ, եթէ առաջնորդներ աշխատին։ Եւ մեք յօժար եմք «Հայքն» ամեն 15 օրն անգամ մի հրատարակել եթէ 500, եթէ գոնէ 400 բաժանորդք գտնուին Միացեալ Նահանգաց մէջ։ Եթէ 600 բաժանորդ ունենայ ՀԱՅԿ Ամերիկայի մէջ, կը հրատարակուի շաբաթը անգամ մի։

Բուրեմն մեք կը սկսիմք այժմ 15 օրն անգամ մի հրատարակելու մտօք, և կը սպասեմք մինչև Յունուար 30, տեսնելու համար թէ Ամերիկայէն քանի՞ բաժանորդ կ'ունենամք, և ըստ վերի խոստման կը շարունակեմք Հայքի հրատարակութիւնն։—այսինքն շաբաթն անգամ մի, եթէ 600 բաժանորդք լինին, 15 օրն անգամ մի եթէ 400, եւ ամիսն անգամ մի եթէ նուազ քան 400 բաժանորդ ունենամք Միացեալ Նահանգներէն։

Փետր. 1ի թուով պիտի հրատարակեմք թէ Ամերիկայի ամեն մէկ գաղթականութենէն քանի՞ բաժանորդ եղած է, և թէ Ամերիկեան ամբողջ բաժանորդաց թիւն քանի՛ է։

Բաժանորդ անո՛նք կը համարուին որք իրենց բաժնեգիններն մեզ հասուցած կը լինին։ Ապառիկ բաժանորդագրութիւն չընդունուիր։

ԱՑԼ ԵՒ ԱՑԼԻՔ

Փրովիտէնսէն կը գրեն մեզ— Յունուար 13ի գաղթականաց ժողովին մէջ հրապարակաւ Տնտեսական ժողովի անդամք և հնչակեանք յայտարարեցին թէ այսուհետև այլ ևս զատ ժողովներ պիտի չունենան, այլ միայն մէկ ժողով, յանուն Գաղթականութեան։ Ոչ հնչակեան անուն պիտի արուի և ոչ Տնտեսականի։ Տիար Յ. Սարգսեանց «Հայքի» մասին խօսեցաւ և բացատրեց թէ ինչու հարկ է որ բաժանորդ գրուին և տարածեն։ Մեր մէջ ըսաւ, անիկա ոսկեղէն մաքուր լեզուի վարժապետ է, և միութենական գաղափարին անխոնջ փաստաբանն եղած է չորս տարի շարունակ։ Հայքը մեզի պատիւ կը բերէ, մենք ալ իրեն պատիւ բերենք։

—Փրովիտէնսի Հայերն ջերմ շնորհաւորութեան արժանի են իրենց միութեան համար։ Ուրախ եմք որ Հնչակեաններ ալ միացած են ընդհանրութեան։

Սքրանթոնէն կը գրեն մեզ։—

Յունուար 12ին, Բանսիլվանիոյ Սքրանթոն քաղաքումս եղաւ մաս-միթինկ մի որուն նախագահեց քաղաքապետ Վոեմ. Քոննէլ և հրացայտ ատենախօսութիւններ եղան բողոքելու Թրքի բարբարոսութեանց դէմ։

Ֆիլատէլֆիայէն կը գրեն մեզ թէ հոն ալ մի եռանդուն և ուշագրաւ մաս-միթինկ եղած է ուր Ամերիկացիք իրենց բողոքոյ ձայն բարձրացուցած են յօգուտ Հայաստանի։

ՆԻՈՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

«Թրիպիուն» Յունուար 3. «Զորս տարբեր կրօնական յարանուանութիւնք մաս-միթինկ մի պիտի անեն այս երեկոյ ժամ 8ին Տր. Բօսիթըրի եկեղեցւոյն մէջ Թ. Էվիւնիւի և 31դ փողոցի անկիւնում։ Միթինկին նպատակն է բողոքել Հայ քրիստոնէից վերայ կատարուող թրքական խժդժութեանց դէմ։ Տր. Մ. Ս. Գաբրիէլեան, խմբագիր ՀԱՅԿԻ, այս երկրում հրատարակուող միակ հայերէն թերթի, պիտի բանախօսէ ներկայ կացութեան և դարմաններու վերայ, և թէ ինչ կարող է մեր կառավարութիւնն անել այս խնդրոյ մէջ։ Տր. Բօսիթըր և Տր. Սթրայքըր ևս մասն պիտի ունենան միթինկին մէջ։»

«Թրիպիուն» Յունուար 4. «Հիւսիսային Երիցական եկեղեցւոյն մէջ, երեկ երեկոյ, միթինկ մի տեղի ունեցաւ Հայոց կրած բարբարոսութեանց դէմ բողոքելու։ Պատ. Տր. Բօսիթըր, հովիւ եկեղեցւոյն, նախագահեց. և խօսեցան Տր. Ա. Իշխանեան, և Տր. Գաբրիէլեան՝ խմբագիր հրատարակիչ ՀԱՅԿԻ, հայերէն թերթի։ Պատ. Տր. Փիթըր Սթրայքըր, 34դ փողոցի բարե-

կարգեալ եկեղեցւոյ հովիւ, բեմին վերայ նստած էր և Հայոց նկատմամբ համակրանք արտայայտող կարգ մի որոշումներ կարդաց։ Տր. Իշխանեան խօսեցաւ Հայաստանի անցեալ պատմութեան մասին։ Յետ նորա բանախօսեց Տր. Գաբրիէլեան որոյ նիւթն էր «Հայաստանի ներկայ վիճակն և թէ ինչ կարէին անել Եւրոպա և Ամերիկա նորա համար։» Ի միջի այլոց ասաց թէ առանց պատերազմի և առանց արիւնհեղութեան կրնայ Անգլիա փոխել Թուրքիոյ կացքն հանդէպ Հայաստանի։ Մեծ Պետութեանց ոչէ երկուքն կը զօրեն բռնադատել զՍուլթանն տալ Հայաստանի Քրիստոնեայ իշխան մի իբրեւ կառավարիչ։ Միացեալ Նահանգք պէտք չունի պաշտօնական կերպիւ միջամտելու Թուրքիոյ և Հայաստանի միջև, սակայն կրնայ անպաշտօնական եղանակաւ մղել զԱնգլիա ի պաշտպանութիւն Հայոց և ի գործադրութիւն Պէռլինի Դաշնագրին։»

Ն. Ե. ՀԷՐԱԼՏ
ԹՐՔԱՑ ԾՈՒՂԱԿԻՆ ՄԷՋ ԻՆԿԱԾ

Ն. Ե. ՀԷՐԱԼՏ կը շարունակէ իւր պայքար յօգուտ Բ. Դրան։

Հէրալտի ուշադիր ընթերցողն յայտնի կը տեսնէ այդ խայտառակ թերթի կողմնակալութիւնն։ Հիւպատոսական և միսիոնարական տեղեկագիրք ցուցին կրկին և կրկին թէ Սաննոյ կոտորածն իրողութիւն է, թէև ամեն մանրամասնութիւն կրնայ ճիշդ չլինիլ։ Հէրալտ կոյր կը ձևանայ, և ինչ զօրաւոր հերքումներ որ իրեն յղուի, կը մերժէ, ինչպէս մերժեց ՀԱՅՐԻ յօդուածը, զՄիւնոյն և զայլոցն։ Այն բողոքն զոր ՀԱՅՐ ուղղած էր իրեն, կրճատելով և տարբեր ձևի տակ հրատարակած է, այնպէս որ ընթերցողք կարծեր են թէ Թուրքիոյ նպաստաւոր յօդուածներ հրատարակելուն դէմ կը գանգատիմք, մինչդեռ մեր բողոքն այն բանին դէմ էր որ Հերալտ մեր հերքողական յօդուածն հրատարակել չուզեց։

Տիար Ս. Անտոնեանի մէկ նամակն ընդունելի եղեր է թերթին, որովհետև թղթակիցն գովեստի խոշոր բառերով մուտքն դիւրացուցեր էր։

Տ. Սիւնի Ն. Ե. Ուրբաթի (16 Յունվ.) մէջ կը յանդիմանէ Հէրալտի անվայել կացքն հանդէպ Հայկական խնդրոյն։ Սիւնի բաւական խոհեմէ ասելու համար թէ Հէրալտ խաբուեր է Թրքէն։

Ն. Ե. ԹՐԻՊԻՈՒՆ և ուրիշ թերթք կը շարունակեն իրենց համակիր ընթացքն Հայաստանի նկատմամբ։

Հեռագիրք նախ ասին թէ Հայ մի սպաններ է Բաղէշի կառավարիչն և ապա ստեցին այդ լուր։

Լոնտոն Յունուար 11.— «Սթիքըր»ն նամակ մի կը հրատարակէ Կ. Պոլսէն անանուանեալ թղթակցէ մի որ կը պնդէ թէ Անգլիոյ դեսպանին հաւասար տեղեկութիւն ունի Հայաստանի մէջ կատարուած թրքական խժդժութեանց վերաբերութեամբ։ Կը յայտարարէ թէ Վանի, Կտրճնոյ, Սեբաստիոյ և Տիարպէքիրի հիւպատոսներէն եկած տեղեկագրութիւններն տեսած է և կ'ասէ թէ նոքա կը հաւաստեն նախապէս հասած ահռելի տեղեկութիւններն։ Հայոց դէմ յղուած զօրքն ետ դարձած են իրենց տներն և հրապարակաւ կը պանծան իրենց արարքին վերայ։ Նոցա խօսքերն տեղեկագրուած են ի Կ. Պոլիս։ Զինուոր մի կը յայտարարէ թէ ինքն քըսան յղի կնիկ մորթեր է։ Ուրիշ մի պարծեցեր է թէ եկեղեցւոյ մի մէջ կոտորածին մասնակից եղեր և արեան հոսանքին դռնէն դուրս վտակումն տեսեր է։ Զինուորներն այնպէս կը կարծեն թէ Ջարդն Սուլթանին հրամանաւն եղած է և նորին հաճութեան արժանացած։

«Տէյլի Նիւզ» վաղն պիտի ասէ—Ցիմարութիւն պիտի լինի մերժել այն ամեն ապացոյցներն որք քննիչ Մասնաժողովոյ առջեւ դրուած չլինին, որ արդէն իւրգործ սկսելու աճապարանք ցոյց չի տար։ Մասնաժողովոյն անկողմնակալութիւնն ծանր երկբայութեան նշաւակ է։ Անոր անուանումն Դրան կողմանէ յաժկամակ զիջում մ'էր Անգլիոյ, Ֆռանսայի և Ռուսիոյ, և իւր գտղափարն քրիստոնէից հետ վարուելու մասին չի կրնար ճշդիւ համաձայնիլ արդի քաղաքակրթութեան։ Այսու ամենայնիւ ճշմարտութիւնն երեւան պիտի գայ, որովհետև քննիչքն հիւպատոսաց արթուն աչաց առջեւ կը գտնուին։ Թուրքիոյ բաղդն անգամ մ'եւս ի կշիռ դրուած է։

Լոնտոն Յունվ. 12.— Քննիչ Մասնաժողովոյն տեղեկագրութիւնն չի կրնար սպասուիլ մի քանի ամիսէն։ Սասուն թանձր ձեան ներքև թաղուած է և ցրտի ասիճանն գրեթէ անկրելի է կլիմային չվարո-

ժուած անձանց։ Կարնոյ Անգլիական հիւպատոսն թելադրած է թէ լաւ կը լինի որ նախնական քննութիւն մի կատարուի անդ ապաստանեալ փախստականաց և ուրիշ վկայից ապացոյցներն լսելու որպէս զի դիւրութիւն մի լինի Մասնաժողովոյն ձեռնարկին։ Լոնտոնի օրաթերթից ոմանց կողմանէ յղուած և յղելի թղթակիցներուն նկատմամբ ալ թելադրութիւնեղած է թէ Դուռն չպիտի հաւանի որ Մամլոյ ներկայացուցիչք ընկերեն Մասնաժողովոյն, և ուստի այս լրագիրներ որոշած անկախ հարցփորձ կատարել։ Այս պարագայից տակ վերջնական տեղեկագրութիւնք կրնան պէսպէս և անհամաձայն լինիլ։

«Քրոնիքլ» այս խնդրոյն վերայ յօդուածի մի մէջ կասէ թէ Գերմանիա հայկական դէպքերուն անկեղծ քննութեան մասին դժուարութեանց աղբիւր եղած է։ Գերմանական կառավարութիւնն այս խնդրոյ վերաբերութեամբ միարանեալ գործողութեան մասնակցիլ չէ ուզեր՝ առարկելով թէ Գերմանիա այդ խնդրոյ մէջ բան չունի, և այս որոշում ի հարկէ մեծ գոհացում պատճառած է Թրքաց Կառավարութեան։

Տիար Հ. Բիրէչեան, քարտուղար Հայասիրաց ընկերակցութեան, Ուօշինկթըն գնացեր է Նախագահին ներկայացում մ'անելու։ Նաև հեռագրաւ դիմեր է առ թագուհին Մեծին Բրիտանիոյ և առ Զարն Ռուսիոյ։

ՄՇԱԿ.— Մեզ հեռագրում են Մոսկուայից Դեկտ. 2ից հետեւեալը. «Այսօր ... (ռուս) լրագրում Հայկական Հարցի մասին երկու յօդուածներ տպուեցին՝ մի առաջնորդող և միւսն էլ Պրոֆէսոր Կոմարովսկու յօդուածը, որոնց մէջ այն կարծիքն է յայտնուում, որ Մեծ պետութիւնները, թէ դաշնագիրների հիման վերայ և թէ մարդասիրութեան բարձր սկզբունքներով, պարտաւոր են օգնութիւն հասցնել Թուրքաց Հայերին և կտրական կերպով պահանջել Բ. Դռնից, որ նա վերջապէս յարգէ Հայերին ինչպէս մարդկանց, որոնք որպէս մարդիկ իրաւունք ունեն անձնական և կայքի ապահովութեան վրայ։»

Ուունսօքէթ բնակող հայ Տիկին Մատանցի Հայաստանի վերայ անգլիէրէն ոտանաւորներ գրելով տեղական լրագրաց մէջ կը հրատարակէ։

Ոմանք տոլար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կա՛մ Բէճիսթրը անել նամակն կամ մընի օրտրը յղել առ ի ապահովութիւն։

Կը խնդրեմք որ մընի օրտրրի կամ մանտատը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E։(Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուներլու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ՀԱՅՔի ներկայ թիւն առնոց միայն կը յղեմք որք նորոգած են իրենց բաժանորդագրութիւն կամ նոր բաժանորդ են։

Ցաւալի է որ բաժանորդագրութեանց ակնկալուած թուոյն փոքր մասն միայն մինչև ցարդ մեզ հասած է։ Երիտասարդներէն ոմանք ծոյրագոյն առատաձեռնութեամբ և օրինակելի փութով շարժեցան, իսկ այլք առասպելական դանդաղութեան մէջ կը մրափեն։

ՀԱՅՔի 1894 տարւոյ վերջին թիւն ծրի պիտի յղեմք մեր նոր բաժանորդներէն առնոց որք կը փափաքին ունենալ։

Պատրաստ եմք ներկայ թիւն փութով յղելու առնոց որոց բաժնեգիրն կը հասնի մեզ այս օրերս։

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄՇԱԿի տարեկան բաժնեգիրն է 5 տոլար։ Հասցէն է "Խմբագրութիւն Մշակի" (MSCHAK) Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա։ ԱՐՁԱԳԱՆՔի կամ պայմանն ու հասցէն նոյն է։

Մեր նշանաւոր ուսումնական թերթերն են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ և ԲԱԶՄԱՎԷՊ։ Տարեկան բաժնեգիրն իւրաքանչիւրին է 2 տոլար։

ԲԱԶՄԱՎԷՊի հասցէն է,
Redaction du BASMAVÉP
St. Lazare, Venis, ITALIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑի հասցէն է,
Redaction du HANTES,
Convent Mechiharist.
VIENNE, AUTRICHE



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուզղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուզեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր ազգ ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St. Worcester, Mass.

NEUMANN BROTHERS
Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի
76 E. 9դ Փողոց
Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անուանն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

Ed. LEGOLL
ԳԵՂԱԳՈՐԾ
286, 7դ Էվինիւ Նիւ Եորք
26դ և 27 Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

Բաւական թուով Պոլսոյ շէնքերու ֆօթոկրաֆներ ունիմ, իւրաքանչիւրն 30 սենթի. անոնք որ կուզեն գնել կանխիկ գնով գրել հետեւեալ հասցէին.

H. K. Samuelian
8 Grant AVE.
AUBURN N. Y.

CHEVOLA & BARALDI,
successor to
LANTELME'S RESTAURANT
40 Union Square
(East side)
Bet. 16th and 17th Sts., NEW YORK

ԱՅՍ ՃԱՇԱՐԱՆՆ ԸՆՏԻՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԱՇԱԿԱՒ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ